ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ*

Տաթևիկ Գևորգյան

ԼՂՀ անկախության հռչակումից հետո մեր ժողովրդի առջև կանգնեցին մի շարք կարևոր խնդիրներ՝ կապված իրավական պետականության կազմավորման հետ: Դա, բնականաբար, առաջ բերեց պետության և իրավունքի խնդիրների աննախադեպ աճ: Պետության և իրավունքի խնդիրների մշտական աճի հետ կապված՝ հայկական ժողովրդավարական հասարակության մեջ ավելի էին բարձրանում պահանջները հայրենական իրավագիտության նկատմամբ:[1] Դրան համապատասխան հայրենական իրավագիտությունը սկսում է լայնացնել անցկացվող հետազոտությունների մասշտաբները: Աճում է իրավաբանական մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը, ավելանում նրանցում գիտական և ուսուցչական աշխատողների թիվը: Հետազոտությունների ճակատի լայնացման հետ միասին հայրենական իրավագիտության բոլոր ճյուղերով առաջանում են նոր գիտական ուղղություններ: Ամրանում են գիտության կապերը պրակտիկայի հետ: Դրա վառ օրինակ են ծառայում ԼՂՀ Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված օրենքները:

Իրավաբանական գիտության առջև դրվող նոր խնդիրների հաջող լուծումն ապահովելու համար անհրաժեշտ է պետության և իրավունքի բնագավառում հետազոտությունների մակարդակի մշտական աճ: Դա առավել ևս կարևոր է նրա համար, որ վերջին տասնամյակում տեղի ունեցող բուհական կոլեկտիվների թվի, գիտական և դասախոսական կադրերի համեմատաբար բուռն աճը և հետազոտությունների ճակատի լայնացումը ոչ միշտ էին ուղեկցվում հետազոտությունների կազմակերպման լայնացմամբ և դրանց մեթոդոլոգիաների կատարելագործմամբ[2]: Գիտական աշխատանքի որակն ու արդյունավետությունը կախված են շատ պայմաններից ու նախադրյալներից: Բացի հետազոտությունների ընդունակություններից, վարպետությունից ու տեսական պատրաստվածությունից, նրանց լայն մտահորիզոնից շատ մեծ նշանակություն ունեն նրանց դիալեկտիկ-մեթոդոլոգիական զինվածությունը, գիտական հիմնահարցերի ճիշտ ձևավորումը, ուսումնասիրվող առարկայի և մեթոդի ընտրությունը, նրա խնդիրների և նպատակների որոշումը, կազմակերպումը և այլն: Այդ պայմաններից յուրաքանչյուրը կարիք ունի հատուկ քննարկման. պետության և իրավունքի բնագավառում ուսումնասիրությունների որակի և արդյունավետության բարձրացման հիմնահարցը դիտարկելու ժամանակ անհրաժեշտություն է առաջանում առաջին պլան մղել նրանց մեթոդոլոգիայի մասին հարցը: Հենց նա կարիք ունի առաջնահերթ քննարկման:

Ցանկացած գիտության զարգացման մեջ հաջողությունները մեծ չափով կապված են ուսումնասիրությունների մեթոդոլոգիայի հետ: Իսկական գիտական մեթոդոլոգիան օգնում է գտնելու ուսումնասիրվող երևույթների և գործընթացների իմացության բավական հուսալի ուղիները, դրանց նույնական արտացոլումը գիտական գիտելիքների համակարգում: Պատմականությունը, հաստատուն աշխարհայացքային դիրքորոշումը, տեսության և պրակտիկայի միասնությունը, գիտական մեթոդոլոգիայի այս կամ այն

---

* Հոդվածն ընդունվել է 11.02.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ իրավունքի ամբիոնը:

պահանջներին հետևելը միշտ ծառայել է պետահիրավական երևույթների իսկապես գիտական վերլուծության կարևոր պայման:

Դրա հետ միասին իրավական գիտության հետագա զարգացման, շատ նոր խնդիրների հաջող լուծման անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում մեթոդոլոգիայի կատարելագործումը: Օրինակ՝ ներկայումս հատկապես մեծ այժմեականություն ձեռք բերող այդպիսի հիմնահարցերի արդյունավետ ուսումնասիրումը, որպես իրավունքի զարգացման կանխատեսում, իրավական կարգավորման էֆեկտիվության, կառավարչական որոշումների, տարբեր խմբերի քաղաքացիների իրավագիտակցության առանձնահատկությունների բարձրացումը, հնարավոր է միայն մեթոդոլոգիայի հարստացման, հետազոտությունների կատարյալ մեթոդները օգտագործելու դեպքում:

Հայրենական գիտությունը ելնում է տեսության և մեթոդի օրգանական միասնության սկզբունքից: Դիալեկտիկան հանդիսանում է հիմք բոլոր սոցիալական հետազոտությունների համար: Նա հաջողությամբ է կատարում այդ դերը՝ օժանդակելով հայրենական հասարակական գիտությունների անշեղ զարգացմանը, ոչ միայն նրան հատուկ մեծ ճանաչողական կարողության ուժով, այլև նրա համար, որ հենց նա զարգանում և հարստանում է նոր եզրակացություններով ու դրույթներով[3]: Դրանց վրա են հենվում հայրենական հասարակագիտության բոլոր ճյուղերը, այդ թվում և իրավաբանական գիտությունը: Նրա կողմից ուսումնասիրվող երևույթների գիտակցումը դիալեկտիկայի տեսակետից հանդես է գալիս որպես պետության և իրավունքի մասին գիտության ստեղծագործական զարգացման անհրաժեշտ նախադրյալ: Ի դեմս նրա՝ հայրենական իրավաբանական գիտությունը առաջին անգամ ձեռք բերեց իսկապես գիտական տեսության և բարդ պետական և իրավական երևույթների ու գործընթացների իմացության մեթոդ: Այդ տեսության և մեթոդի հիման վրա էլ բացահայտվել է հայրենական պետության և իրավունքի էությունը, որոշարկվել դրանց առաջացման, զարգացման օրինաչափությունները, գործելու մեխանիզմը և հասարակական հարաբերությունների վրա ներգործելու կարգավորման ձևերը[4]:

Առավել բարձր մակարդակի վրա ավելի խորը պարզաբանման կարիքն ունեն իրավական պետականության պայմաններում շուկայական տնտեսության և քաղաքականության հիմնահարցերը, սոցիալ-քաղաքական, կազմակերպական և տեխնիկական ասպեկտներըհասարակության գործերի կառավարման մեջ, պետության դերը տնտեսական մեխանիզմի կատարելագործման մեջ, ժամանակակից փուլում արտադրության էֆեկտիվության բարձրացման մեջ և այլն:

Գործող օրենսդրությունը կատարելագործելու մեջ հասած հաջողությունների հիման վրա, նրա միավորման և օրինակարգման՝ իրավակիրառ պրակտիկայի ընդհանրացման և օրինականության ամրացման մեջ, պետք է այդ բնագավառում առաջացող շատ հիմնարար հիմնահարցեր ենթարկել բազմակողմ և խորը հետազոտության: Հետագա քննարկման կարիք ունեն հայրենական իրավունքի հասկացության, նրա սկզբունքների, իրավունքի համակարգի զարգացման ուղիների, բարոյականության և սոցիալական կարգավորման այլ ինստիտուտների հետ նրա փոխգործողությունների մասին հարցը:

Խոսելով մեթոդոլոգիական զինանոցի մշտական կատարելագործման անհրաժեշտության մասին՝կարևոր է հիշել Մարքսի ցուցումներն այն մասին, որ, «ոչ միայն ուսումնասիրության արդյունքը, այլև դեպի այն տանող ուղին պետք է լինի ճշմարիտ»[5]: Իմացության տեսությունը, ինչպես հայտնի է, մշակել է սոցիալական երևույթների ուսումնասիրման առավել ռացիոնալ ճանապարհ՝ կենդանի հայեցությունից դեպի վերացական դատողություն և նրանից դեպի պրակտիկա: Իմացության այդ ճանապարհը ,

դժբախտաբար, ոչ միշտ է կիրառվում պետության և իրավունքի հիմնահարցերի ուսումնասիրման գործընթացում և, երբեմն, հիմնահարցի իսկական ուսումնասիրությունը փոխարինվում է վաղուց հայտնի եզրակացությունների մեխանիկական վերապատմությամբ, գիտական վերացության տեղը զբաղեցնում է տարրական փորձապաշտությունը, ռացիոնալ իմացությունը կանգ է առնում հայեցողական փուլի վրա: Իրավական ուսումնասիրությունների գիտական մակարդակի բարձրացումը հրատապ է դարձնում իմացության տվյալ ճանապարհի կիրառման առանձնահատկությունների մշակումը պետահրավական ոլորտում:

Ուսումնասիրության գործընթացը իմացական դատողության ուղղագիծ շարժում չէ հայեցողությունից դեպի վերացությունը և նրանից դեպի պրակտիկա: Իրականում այդ գործընթացը ավելի բարդ է. այն ոչ միայն կրկնվում է իմացության յուրաքանչյուր փուլում, այլև բնութագրվում է այդպիսի փուլերի միահյուսվածությամբ, հակառակ շարժմամբ, վերադարձով դեպի այն, ինչից սկսվել էր շարժումը և այլն: Այստեղից՝ փաստերի, հանգամանքների, ընթացիկ պահի իրավիճակների, արդեն մշակված վերացությունների քննադատական ստուգումը՝ այն տվյալներին վերադառնալու ճանապարհով, որոնց վրա նրանք հիմնվում էին, դեպի կոնկրետ՝ որպես բազմատեսակի միասնության, վերացության շարժման ճշտության բազմակողմ ուսումնասիրման անհրաժեշտությունը[6]:

Իրավագիտության հատուկ հետազոտական ուսումնասիրման մեթոդ է հանդիսանում համեմատահրավականը: Կարելի է, թերևս, ասել, որ համեմատական հետազոտության մեթոդը մշակված է իրավաբանական գրականության մեջ բավականին լրիվ [7]: Վերջին հաշվով դա կապված է այն բանի հետ, որ իրավունքի ոլորտում համեմատական հետազոտությունները խաղում են ոչ միայն գիտական ճանաչողական մեծ դեր, այլև կրում են իրենց վրա գործնական-կիրառական նշանակալի ծանրություն: Սակայն այստեղ ևս մի շարք օբյեկտիվ գործոններ պահանջում են համեմատական հետազոտություններիմասշտաբների նշանակալի մեծացում և, համապատասխանաբար, այդպիսի հետազոտությունների մեթոդոլոգիաների զարգացումը: Համեմատական մեթոդի կիրառման ոլորտի մասին հարցի հետ կապված զգացնել է տալիս իրավունքի ուսումնասիրման ասպեկտները լայնացնելու ընդհանուր տենդենցը՝ որպես բարդ և բազմակողմ սոցիալական համակարգի:

Իրավաբանական ուսումնասիրություններում կարևոր նշանակություն է ձեռք բերում համակարգային մեթոդը: Համակարգային մոտեցման հիմքը կազմող սկզբունքների կոնստրուկտիվ օգտագործումը պետահրավական ուսումնասիրություններում, թույլ է տալիս նոր ձևով մոտենալ մի շարք հիմնահարցերի լուծմանը, տեսնել դրանց ամբողջական՝ հաշվառելով դրանց բոլոր գլխավոր բաղադրիչները , գործոնները և փոխադարձ կապերը, ինչպես նաև ավելի ճիշտ ներկայացնել դրանց տեղն ու դերը երևույթների առավել լայն շրջանում:

Վերջին տարիներին փորձեր են ձեռնարկվում օգտագործելու վերլուծության քանակական մեթոդները պետության և իրավունքի հիմնահարցերի ուսումնասիրության ժամանակ: Կարելի է միայն ողջունել գիտական եզրակացությունների ապացուցողականությունը ուժեղացնելու ձգտումը, բայց պետք է հաշվի առնել, որ քանակական վերլուծության ձևերը չեն կարող փոխարինել պետության և իրավունքի հիմնահարցերի բովանդակալից ըմբռնողականությանը: Կան հայտնի հաջողություններ և կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդների կիրառման բնագավառում, հատկապես քրեաբանական բնույթի հիմնահարցերի ուսումնասիրման ոլորտում[8]: Այստեղ, շնորհիվ կոնկրետ սոցիոլոգիական մեթոդների որակյալ օգտագործման, ինչպես նաև

անձի սոցիալ-հոգեբանական տեսության ներգրավման, ստացված են գիտական և գործնական տեսակետից կարևոր արդյունքներ, որոնց ձեռքբերումը այլ միջոցներով անհնարին կլիներ:

Եվ այնուամենայնիվ հարկավոր է արձանագրել, որ ամբողջությամբ հայրենական իրավագիտությունը դեռևս շատ հեռու է նրանից, որպեսզի հնարավոր լիներ խոսել նրա կողմից կոնկրետ սոցիոլոգիայի մեթոդների արդյունավետ յուրացման մասին : Այստեղ դեռևս լրացուցիչ մեծ աշխատանք կա անելու: Սոցիոլոգիական միջոցներով օբյեկտի ուսումնասիրման մեթոդները, կազմակերպումը, գործընթացը և տեխնիկան՝ գիտության բավական զարգացած և մասնագիտացված բնագավառ է, որի շրջանակներում աշխատանքը ենթադրում է հիմնավոր հատուկ նախապատրաստություն: Իսկ սոցիոլոգիական մեթոդների խորը յուրացումը ժամանակակից պայմաններում իրավագիտության համար հանդիսանում է անհրաժեշտ: Այդ խնդրի լուծումը շատ բանով կախված է, մասնավորապես, այնպիսի կարևոր գիտական ուղղության զարգացումից, ինչպիսին է պետական կառավարման տեսությունը, որի տեմպերը նկատելիորեն ետ են մնում պետական շինարարության գիտության և պարակտիկայի պահանջմունքներից: Կոնկրետ-սոցոլոգիական մեթոդների բազմակողմ յուրացումը ձեռք է բերում լուրջ նշանակություն՝ կապված օրենսդրության էֆեկտիվության բարձրացման համար աշխատանքներ անցկացնելու անհարժեշտության հետ, այդ թվում և նրա հետագա համակարգայնացման ընթացքում: Հասարակական հարաբերությունները զարգանում են և դա չի կարող հասարակության գիտակցության մեջ, մարդկանց վարքի պատճառների մեջ փոփոխություններ չառաջացնել: Այն, ինչ էֆեկտիվ էր երեկ (օրինակ, աշխատանքի խթանման մեջ), այսօր հանդիսանում է առարկայազուրկ: Անհրաժեշտություն է առաջանում այն սոցիալական գործընթացների կոնկրետ-սոցիալական խորը վերլուծության մեջ, որոնք կարգավորելու է կոչված իրավունքը: Մեր երկրի օրենսդրության նորացման և կատարելագործման խնդիրը, որը, թվում է, թե կրում է զուտ իրավական բնույթ, արդեն չի կարող հաջողությամբ լուծվել առանց իրավաբանական ուսումնասիրությունները սոցոլոգիականներով լրացնելու:

Ցանկացած գիտական արդյունքի որակի գնահատման համար ոչ պակաս էական են հանդիսանում հետազոտված հիմնահարցերի նշանակալիությունը և նրանց արդիականությունը: Հիմնահարցը կարող է լինել բացարձակապես նոր, որևէ չափով լուրջ բան չներկայացնել, և հակառակը, գոյություն ունեն, « հավերժական» հիմնահարցեր, որոնք միշտ այժմեական են և որոնց մշակման մեջ իրենց ներդրումն էր բերում գիտնականների ամեն մի նոր սերունդ՝ բացահայտելով դրանց մեջ նոր տեսակետներ, նոր կողմեր:

Վերջիններիս օրինակներ կարող են ծառայել օրինականության, օրինակարգի, քաղաքացիների իրավունքների, իրավունք հասկացության և բովանդակության հիմնահարցերը, որոնք, ի դեպ, բավական լրիվ հետազոտվել են հայրենական իրավագիտության մեջ [9]:

Չի կարելի մոռանալ և շարադրման լեզվի ու ոճի մասին: Տերմինաբանության խստությունը, շարադրման հստակությունն ու հակիրճությունը, կուռ կառուցվածքն ու տրամաբանական պարզությունը կազմում են աշխատանքի էական գիտական արժանիքները:

Հիմնահարցերը, կանգնած իրավագիտության առջև՝ նրա մեթոդոլոգիական ապարատի և գիտական հետազոտությունների որակի կատարելագործման պլանով, բավական ընդարձակ են: Դրանց արմատական լուծումը հարկ եղած մակարդակով կպահանջի ոչ քիչ ժամանակ և նշանակալի ճիգեր: Բայց, որպեսզի այդ ճիգերը լինեն բա-

վականին նպատակաուղղված և էֆեկտիվ, անհրաժեշտ են հետազոտությունների մեթոդոլոգիայի և պետության ու իրավունքի բնագավառում աշխատանքների որակի հիմնահարցերի բազմակողմ քննարկում, ստեղծագործական բանավեճերի զարգացում, արդիական հիմնահարցերի լայն քննարկում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Апиян Н. А., Правовая наука Республики Армения: настоящее и перспективы развития. "Еркир", 16 апреля, 1994.
2. Мкртчян М. Программа. "Голос Армении", 23 января 2003.
3. Մանրամասն այդ մասին տես Кузнецов В. Г., Кузнецов И. Д., Миронов В. В., Момджян К. Х. Философия. Учебник 2000, стр. 174-187
4. Ապիյան Ն. Ա., Սաֆարյան Գ. Հ., Հակոբյան Ձ. Հ., Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ: Եր., 2001
5. Маркс К., Энгельс Ф. Соч., т. 1. Стр. 7
6. Մանրամասն այդ մասին տես Каримов Д. А. Методология права (предмет, функции, проблемы философии права), М., 2000, стр. 127-156, 310-344
7. Марченко М. Н. Сравнительное правоведение. Общая часть. Учебник для юридических вузов. М.,"Зеркало", 2001, стр. 24-36
8. Габузян А. А. Должностные преступления: криминологический и уголовно-правовой аспекты субъективной стороны. Ер., 2000; Аракелян А. В., Габузян А. А. Маркарян А. Р. Методика криминологических исследований. Учебное пособие. 2001
9. Апиян Н. А., Товмасян М. А. Законность и правопорядок в правовом государстве. Ер., 2000: Խաչատրյան Ա. Ա. Իրավունքի օրինաչափությունները (նոր ուսմունք իրավունքի մասին):Եր., 2003: Նույնի, Իրավունքի էֆեկտիվություն, Եր., 2003.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գիտական հետազոտությունների մեթոդոլոգիան պետության և իրավունքի բնագավառում

Տաթևիկ Գևորգյան

ԼՂՀ անկախության հռչակումից հետո մեր ժողովրդի առջև կանգնեցին մի շարք կարևոր խնդիրներ՝ կապված իրավական պետականության կազմավորման հետ: Պետության և իրավունքի բնագավառում գիտական հետազոտությունների մեթոդոլոգիան առանձնահատուկ տեղ ունի, որովհետև ցանկացած գիտության զարգացման մեջ հաջողությունները մեծ չափով կապված են ուսումնասիրությունների մեթոդոլոգիայի հետ:

Բանալի բառեր՝ *պետություն, իրավունք, գիտություն, մեթոդոլոգիա, իրավական խնդիրներ:*

РЕЗЮМЕ
Методология научных исследований в области государства и права
Татевик Геворкян

После провозглашения независимости Нагорно-Карабахской Республики, перед нашим народом встал ряд важных задач, связанных с организацией правовой государственности. В области государства и права методология научных исследований имеет особое место, потому что успехи в развитии любой науки в огромной степени связаны с методологией исследований.

Ключевые слова: *государство, право, наука, методология, правовые проблемы.*

SUMMARY
The Methodology of Scientific Research in the Field of State and Law
Tatevik Gevorkyan

After the declaration of independence of the Republic of Nagorno-Karabakh, our people were confronted with a number of important tasks related to the organisation of the legal statehood. The methodology of scientific research holds a special place in the field of state and law. This is because the progress in the development of any science vastly depends on the research methodology.

Keywords: *state, law, science, methodology, legal issues.*